ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ

ԶՊՄԿ-ն շարունակում է անտառ-վերականգնման աշխատանքները. կապանցիներին հայտնի շուկայի վերևի դեղին հողեր տանող ճանապարհը սահմանագծված է 08

«...Հայաստանը հարևանների համեմատ նույնիսկ մի քանի տասնյակ անգամ ավելի մեծ շահույթ կարող է ստանալ». Հայկ Ակարմազյան 10

Ավարտվել են «Լեռնագործ» մարզադաշտի վերանորոգման աշխատանքները. այն արդեն կարող է տեղավորվել 2500 հանդիսական 12

ԸՆԴԵՐՔԻՑ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՑ
Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնագործների 18
press@zcmc.am

№43 • 2024Թ.

ԵՐԿԱՐԱՄՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԽՐԱԽՈՒՍՎԵՑ.

ձեռնարկությունը հանդիսավոր արարողությամբ է նշում կանանց մեկամսյակը

06 - 07

Ինչո՞ւ կանայք պետք է ներգրավված լինեն հանքարդյունաբերության ոլորտում

«Մեր ընկերությունում աշխատող կանանց մոտ 90-92%-ը Սյունիքից են», – նշեց «ԶՊՄԿ» ՓԲԸ Կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանը:

Արդյոք խնդրի արմատը մտածելակերպի և կրթության մեջ է...

Ըստ Արմեն Ստեփանյանի՝ Հայաստանում և աշխարհում հանքարդյունաբերության ոլորտում կանանց քիչ լինելու պատճառը ոչ թե գործատուների կողմից խտրականությունն է, այլ մարդկանց մտածելակերպն ու կրթական համակարգը. կանայք իրենք դեռ առանձնապես չեն ձգտում մտնել այս ոլորտ:

«Մասնագիտություն ընտրելիս ավագ դպրոցի աղջիկները հազվադեպ են մտածում հանքարդյունաբերության, երկրաբանության, քիմիական տեխնոլոգիաների, էներգետիկայի մասին: Տղաներն են ավելի շատ ընդունվում այսպիսի ֆակուլտետներ: Եվ, երբ մեզ երբեմն անհրաժեշտ է լինում աշխատողներ ընտրել, դիմորդների մեջ տղամարդիկ ավելի շատ են, քան՝ կանայք: Այսինքն՝ խնդրի արմատը ոչ թե այն է, որ գործատուները չեն ցանկանում աշխատանքի ընդունել կանանց, այլ այն, որ կանայք դեռ հազվադեպ են ընտրում այս մասնագիտությունները», – նշեց նա:

Ստեփանյանի խոսքով, եթե բուհերի համապատասխան ֆակուլտետներում լինեին հավասար թվով աղջիկներ և տղաներ, իսկ իրականում դաշտում գերակշռեին տղամարդիկ, ապա կարելի կլիներ խոսել խտրականության մասին: Նա վստահ է, որ երբ ավելի շատ աղջիկներ սկսեն հետաքրքրվել ինժեներատեխնիկական մասնագիտություններով, մի քանի տարվա ընթացքում նրանց թիվը համապատասխան ընկերություններում նկատելիորեն կավելանա:

«Կարծում եմ՝ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ մարդը, անկախ սեռից, կարող է ընտրել իրեն հոգեհարազատ մասնագիտություն: Եթե կինն ուզում է դառնալ հանքարդյունաբերության մասնագետ, կամ գլխավոր ինժեներ, տնօրեն, նա պետք է հնարավորություն ունենա նման ընտրություն կատարելու և գնալու այս ճանապարհով», – ասաց նա:

Ինչ վերաբերում է խտրականությանն ընդհանրապես, ապա Ստեփանյանը չի բացառում, որ որոշ ոլորտներում դա կարող է լինել. որոշ գործատուների կարող է անհանգստացնել փաստը, որ երիտասարդ կինը կարող է ամուսնանալ և գնալ ֆիզարձակուրդ: Սակայն Ստեփանյանը վստահ է, որ եթե ընկերության աշխատանքը ճիշտ կազմակերպվի, ապա ֆիզարձակուրդը աշխատողների համար խնդիր չպետք է դառնա. արձակուրդից հետո նրանք կվերադառնան աշխատանքի և արագ կփոխհատուցեն կորցրած ժամանակը:

«Աշխատակիցներին ընտրելիս պետք է հիմնվել նրանց գիտելիքների և մասնագիտական որակների վրա, այլ ոչ թե՝ նկատի ունենալ ֆիզարձակուրդ գնալու հնարավորությունը: Եթե ճիշտ կազմակերպվի աշխատանքը, ոչ մի խնդիր չի առաջանա», – վստահեցրեց նա:

Ըստ Արմեն Ստեփանյանի՝ Հայաստանում և աշխարհում հանքարդյունաբերության ոլորտում կանանց քիչ լինելու պատճառը ոչ թե գործատուների կողմից խտրականությունն է, այլ մարդկանց մտածելակերպն ու կրթական համակարգը. կանայք իրենք դեռ առանձնապես չեն ձգտում մտնել այս ոլորտ:

Հայ երկրաբանների մի քանի սերունդ անուրանալի ավանդ է ունեցել արդյունաբերության զարգացման դժվարին գործում. **Վարդան Ջհանյանի ուղերձը՝ Երկրաբանի օրվա առթիվ**

Հայ երկրաբանների մի քանի սերունդ իրենց անուրանալի ավանդն են ունեցել օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման ու Հայաստանի արդյունաբերության զարգացման դժվարին գործում: Այս մասին նշված է Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության նախագահ Վարդան Ջհանյանի՝ Երկրաբանի մասնագիտական տոնի առթիվ շնորհավորական ուղերձում:

«Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության և անձամբ իմ անունից սրտանց շնորհավորում եմ այս կարևոր մասնագիտական օրվա կապակցությամբ: Անցյալում շատերիս երազած ուժեղ, զարգացած և անկախ Հայաստան ունենալու երազանքի իրականացումն ասոցացվել է օրնիբուն աշխատելու, այդ թվում նաև երկրաբանի ազնիվ ու քրտնաջան աշխատանքի հետ: Հայ երկրաբանների մի քանի սերունդներ իրենց անուրանալի ավանդն են ունեցել օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման ու Հայաստանի արդյունաբերության զարգացման դժվարին գործում, հայտնաբերել են խոշոր հանքավայրեր, որոնք մինչև այսօր հազարավոր ընտանիքների ապահովում են արժանապատիվ աշխատանքով և երկրի տնտեսության համար կայուն հիմք են հանդիսանում: Վստահ եմ, մեր երկրի տնտեսության զարգացմանն ու հզորացմանը միտված բազում ծրագրերի ամենաարագ ու արդյունավետ իրականացումները անմիջականորեն կապված են հանքարդյունաբերության և, հատկապես, «կանաչ տնտեսության» անցմամբ պայմանավորված կրիտիկական մետաղների աճող պահանջարկի հետ: Դրա համար մեզանից յուրաքանչյուրից պահանջվում է նվիրվածություն և համախմբված ամենօրյա աշխատանք, որի ներուժն ու պատրաստակամությունն այսօր մենք՝ բիզնեսի ներկայացուցիչներս տեսնում ենք ակադեմիական հանրության շրջանում: Կրկին շնորհավորում եմ «Երկրաբանի օրվա» առթիվ և մաղթում եմ ծրագրերի իրականացում, նոր հաջողություններ, բեղմնավոր և արդյունավետ աշխատանք» , – նշված է ուղերձի մեջ, որն ընթերցել է Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության տնօրեն Վոլոդյա Կիրակոսյանը՝ ԵՊՀ-ում տեղի ունեցած՝ երկրաբաններին նվիրված միջոցառմանը: Միջոցառմանը ներկա են եղել ՀՀ կառավարության ներկայացուցիչներ, ԵՊՀ ռեկտորը, պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներ, Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահը, գիտնականներ և երկրաբաններ:

5 ԱՊՐԻԼԻ

Միջոցառմանը ներկա են եղել ՀՀ կառավարության ներկայացուցիչներ, ԵՊՀ ռեկտորը, պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներ, Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահը, գիտնականներ և երկրաբաններ:

Երկարամյա աշխատանքը խրախուսվեց

Կակաչների փնջերն ու պատվոգրերը սպասում են իրենց տերերին՝ ԶՊՄԿ-ում 35 և ավելի տարիներ աշխատած կանանց: Ձեռնարկությունը հանդիսավոր արարողությամբ է նշում կանանց իրավունքների պաշտպանության օրը:

«ԶՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին շնորհավորական խոսքում ուրախությամբ նշում է՝ ձեռնարկության աշխատակիցների 22 տոկոսը կանայք են, այնինչ համաշխարհային վիճակագրությունն այլ է՝ հանքարդյունաբերության ոլորտում կին աշխատակիցներն առավելագույնը 17 տոկոսն են.

– Ես ցանկանում եմ ձեզ մաղթել առողջություն, սեր, երջանկություն, մասնագիտական հաջողություններ, մենք բարձր ենք գնահատում ձեր աշխատանքը, շատ հաճելի է շնորհավորել մեր 35 և ավելի տարիներ աշխատած գործընկերներին, դա կյանքի շատ մեծ ժամանակահատված է, որը կապված է եղել կոմբինատի հետ, և ես դրա համար երախտապարտ եմ ձեզ, – հավելում է նա:

Ընկերության վարչական դեպարտամենտի ղեկավար Զարա Սիանոզովան, իր ելույթում կարևորելով կանանց դերը կոմբինատի կայացման գործում, ասաց.

– Ես այսօր մտածեցի, որ 35 տարին մի ամբողջ կյանք է, համեմատեցի իմ աշխատած տարիների հետ, հասկացա, որ 35 տարվա ստաժ ես չունեմ: Ինձ համար մեծ պատիվ է շնորհավորել ձեզ: Ես ձեզ ևս այդքան տարի եռանդուն, լավ, սիրուն կյանք եմ մաղթում: Որ դուք միշտ ձեզ լավ զգաք կոմբինատում, հարգված լինեք, սիրված լինեք, ձեր կարիերան միայն

ՌՈՄԱՆ ԽՈՒԴՈԼԻ
«ԶՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն

աճի:
Շուրջ 4 տասնամյակ ԶՊՄԿ-ում աշխատած կանայք հուզված էին, նրանցից շատերին կյանքում առաջին անգամ էին հրապարակային շնորհակալություն հայտնում երկարամյա, անբասիր աշխատանքի համար:
Լիլիա Գրիգորյանն ասում է, որ շատ չի մնացել վաստակած հանգստի անցնելուն, և իր 40 տարվա աշխատանքի իրական գնահատականն իրեն ուղղված ծափերն էին.
– Գնալու եմ պատմեմ, թե ոնց է եղել ամեն ինչ, զանգահարելու եմ իմ թոշակի գնացած գործընկերուհիներին, և ամեն ինչ պատմեմ:
Տիկին Սվետլանան տեղամասի վարպետ է, 18 տարեկանից աշխատում է կոմբինատում, հպարտությամբ է ներկայացնում մասնագիտական աճի իր պատմությունը, շեշտում է, որ այսօր հասկացավ, թե որքան շնորհակալ գործ է անում:
– Սկզբում աշխատել եմ մարզահամալիրում, հետո՝ ֆաբրիկայում, սկզբնական շրջանում աշխատանքս շատ ծանր էր, բայց համակերպվեցի: Հետո մտածեցի՝ եթե ունեմ մտավոր ու ֆիզիկական տվյալներ, ինչու առաջ չգնամ: Ընդունվեցի և 50 տարեկանում ավարտեցի պոլիտեխնիկական համալսարանը: Կարող եմ ասել, որ ես լավ աշխատող էի, արժանի էի այս աշխատանքին և ստացա այն, – նշեց նա:

Տիգրանուհի Բաղալյան

ՀԱՐԱ ՍԻԱՆՈՋՈՎԱ
«ԶՊՄԿ» ՓԲԸ վարչական դեպարտամենտի ղեկավար

ՍՔԱՆԱՎՈՐԻՐ ՕՐ կոդը՝ ԻՄԱՑԻՐ ավելին:

Ժամանակակից սարքավորումներով աշխատանքը բավական դյուրին է դարձնում գործը

Ռիտա Նազարյանը ԶՊՄԿ քիմիական լաբորատորիայում որպես լաբորանտ աշխատում է 1978 թվականից: 18 տարեկանից ինտեգրվել է կոմբինատի մեծ կոլեկտիվին և ասում է՝ հետհայացք ձգելով միայն գիտակցում ես՝ մի ամբողջ կյանք, 46 աշխատանքային տարիներ՝

ՌԻՏԱ ՆԱԶԱՐՅԱՆ
ԶՊՄԿ քիմիական լաբորատորիայի լաբորանտ

անցել են ակնթարթի պես: Բոլորովին դժվար չէ աշխատել կանանց կոլեկտիվում, համերաշխությունն ու պատասխանատվությունը գործի նկատմամբ հենց այն հիմնասյուներն են, որոնք կապում են մեկ ընդհանուր նպատակ հետապնդող գործընկերներին: Համեմատել հիարկե ճիշտ չէ այն տարիների աշխատանքն ու պայմանները՝ ներկայիս հետ: Հիմա ժամանակակից սարքավորումներով են աշխատում, ինչը բավական դյուրին է դարձնում գործը, ավելի անվտանգ ու նաև՝ հաճելի: Տարիները չեն հոգնեցրել տիկին Ռիտային. հիմա էլ գործի մեջ է նույն տեմպով ու եռանդով, ինչի մասին նաև վկայում են գործընկերներն ու անմիջական ղեկավարները:

«Օրվա հերոսները 45-ն էին, նրանք նաև ստացան դրամական խրախուսական պարգև:

Անցյալ տարվա ընթացքում ԶՊՄԿ-ն ընդունել է 460 այցելուի

Ավանդույթը շարունակվում է. Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ էին այցելել Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի ավագ դպրոցի մանկավարժներն ու աշակերտները:

Դայրենագիտական կրթական-ճանաչողական այցով Սյունիքում շրջագայության ծրագրում դպրոցի նախաձեռնությամբ ներառվել էր նաև այցելություն՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ:

Կրթահամալիրի աշակերտները ծանոթացան Ընկերության աշխատանքային անվտանգության կանոններին, անհատական պաշտպանիչ միջոցների կիրառման պայմաններին ու նպատակներին, ստացան համապատասխան հրահանգավորումներ, շրջեցին ընկերության արտադրական տարածքներում՝ բացահանք, ՀՖ Ամերիկյան ինքնամանրացման տեղամաս և այլն:

Ընկերությունը կարևորում է նման ճանաչողական այցերը, քանի որ սա հանրային իրազեկման արդյունավետ միջոցներից է՝ ծանոթացնելու հանրությանը երկրի տնտեսության հենասյուն հանդիսացող ոլորտին, ներկայացնելու իրական խնդիրներն ու ձեռքբերումները:

Միայն 2023 թվականին ԶՊՄԿ-ն ընդունել է ընկերության գործունեությամբ հետաքրքրված 460 այցելուի, այդ թվում՝ օտարերկրացիների, ովքեր եղել են հանքավայրում և ֆաբրիկայում: ԶՊՄԿ այցելել են տարբեր մասնագիտության և հետաքրքրության տեր մարդիկ՝ լրագրողներ, գիտնականներ, ուսանողներ, արվեստագետներ, ֆուտբոլիստներ, աշակերտներ ու պարզապես զբոսաշրջիկներ:

Ոգևորիչ է նաև այն հանգամանքը, որ ոլորտով հետաքրքրվողների թիվն աճում է: Նրանք ցանկանում են սեփական աչքով տեսնել ընկերության կողմից ներդրած տեխնոլոգիաներն ու բնության վրա ազդեցության մեղմմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը:

Բաց դռների մոտեցումը ընկերության որդեգրած թափանցիկության քաղաքականության մաս է կազմում և ԶՊՄԿ-ն ակտիվացնելու է ընկերության գործունեությանը ծանոթանալ ցանկացողների հետ շփումը:

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրը իրականացնում է ամբողջական միջնակարգ (նախակրթական, հանրակրթական, ավագ), արհեստագործական, միջին մասնագիտական և այլընտրանքային կրթական ծրագրեր: Հիմնվել է 1989 թվականին:

«ԲԻԴԻՕ Արմենիա» ընկերությունը Երևանում անցկացրել է «Բնապահպանական, սոցիալական և կառավարչական սկզբունքներ. բիզնեսի համար հնարավորությունների բացահայտում» խորագրով մեկօրյա տարածաշրջանային կոնֆերանս

ԶՊՄԿ ներկայացուցիչները մասնակցել են «ԲՍԿ սկզբունքներ. բիզնեսի համար հնարավորությունների բացահայտում» տարածաշրջանային կոնֆերանսին

Կոնֆերանսի ընթացքում կայացել են բովանդակալից ելույթներ, դինամիկ պանելային քննարկումներ տարբեր ոլորտներ ներկայացնող հայաստանյան և միջազգային ընկերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Մասնակիցների թվում էին նաև մեր ընկերության Կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանը և նրա տեղակալ Աննա Սաղաբալյանը: «Բացառիկ հարցազրույց ոլորտային ղեկավարների հետ. Կայուն զարգացման հաշվետվողականության նշանակալի օրինակներ Հայաստանում» թեմայով հարցազրույցի ձևաչափով քննարկմանը ԶՊՄԿ կայուն զարգացման գծով տնօրեն Արմեն Ստեփանյանը նշել է. **«Շատ կարևոր էր լսել, թե ի՞նչ են մեզնից ակնկալում շահագրգիռ կողմերը: Լսեցինք մեր քաջարանցիներին, որոնք շարունակաբար բողոքում էին փոշու ազդեցությունից և որոշեցինք առաջնահերթ սկսել հենց այդ խնդրի լուծումից: Մի քանի հատ ջրային թնդանոթներ ենք ձեռք բերել, փորձարկեցինք և շահագրգիռ կողմերից հավաքել ենք հետադարձ կապը, որը շատ դրական է, որի վրա արդեն պետք է կառուցենք ապագան»**, – հայտնել է նա: Նա ընդգծել է, որ հանքարդյունաբերությունը խնդրահարույց է, բայց «ԶՊՄԿ»-ն վեր է հանում բոլոր խնդիրները: **«Հանքարդյունաբերությունն ընկալվում է որպես բնապահպանական մեծ խնդիր, այն ունի մեծ բնապահպանական ազդեցություն, որն անկառավարելի չէ: Ոչ «ԶՊՄԿ»-ն, ոչ էլ Հայաստանի մյուս հանքարդյունաբերական գործարանները չունեն անլուծելի խնդիրներ, բոլոր ռիսկերը կառավարելի են»,** – ասել է Արմեն Ստեփանյանը՝ հավելելով, որ մոտակա տարիներին «ԶՊՄԿ»-ն ամբողջությամբ կդառնա միջազգային չափորոշիչներին համապատասխան ընկերություն: Նշենք, որ Կոնֆերանսը ևս մեկ լավ հնարավորություն էր խոսելու և անդրադառնալու հայկական բիզնես ոլորտում բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) բաղադրիչի դերի մասին:

> *«Հանքարդյունաբերությունն ունի մեծ բնապահպանական ազդեցություն, որն անկառավարելի չէ: Ոչ «ԶՊՄԿ»-ն, ոչ էլ Հայաստանի մյուս հանքարդյունաբերական գործարանները չունեն անլուծելի խնդիրներ, բոլոր ռիսկերը կառավարելի են»...*
>
> ***ԱՐՄԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ***

ԶՊՄԿ-ն շարունակում է անտառվերականգնման աշխատանքները

Շուրջ մեկ ամիս է՝ կապանցիներին հայտնի շուկայի վերևի դեղին հողեր տանող ճանապարհը սահմանագծված է. ծանր տեխնիկա է աշխատում: Կապանցիները նույնիսկ սոցիալական ցանցերում են քննարկում այդ հատվածում կատարվող աշխատանքները:

Անցյալ դարի կեսերին այդ բարձունքում հանքանյութեր հայտնաբերելու նպատակով հետախուզական աշխատանքներ են կատարվել, բացվել են ծանր մետաղներ պարունակող շերտեր: Մնացուկներն օքսիդացել են ու տարածքը պատել դեղին շերտով: Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը 20 հեկտար ընդգրկող անտառվերականգնման ծրագրում ներառել է նաև այս հատվածը: «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի բնապահպանության բաժնի պետի տեղակալ **Արծվին Ծատրյանի** խոսքերով.

– Տարածքն ընտրվել է Կապան համայնքի ղեկավարի հետ սերտ համագործակցության արդյունքում: Նախատեսվում է այստեղ ունենալ 1.2 հա անտառ, որը, կասկա-

դային հարթակների միջոցով, տարանջատված է լինելու: Այս պահին դուրս են բերվում օքսիդացած ապարները, որի արդյունքում ստացվելու են համապատասխան հարթակները: Ամբողջ դեղին ծածկը հեռացվելու և տեղափոխվելու է Կապան համայնքի աղբավայր: Աղբավայրում ևս աշխատանքներ կկատարվեն, որպեսզի վնասված հողն արտաքին միջավայրում հայտնվելու հնարավորություն չունենա: 2025թ. գարնանը հողային աշխատանքներն ավարտված կլինեն, կանցկացվի կաթիլային ոռոգման

Հանքարդյունաբերական ձեռնարկության բնապահպանության բաժնի պատասխանատուները վստահեցնում են՝ մի քանի տարի հետո կապանցիները զբոսանքի ևս մեկ գեղեցիկ վայր կունենան

ցանց, կսկսվի ծառատունկ: Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնկարանում խնամվող ճապոնական սերկևիլի տնկիները, գալարվող գիհիները, ուռատերև տանձենիները, մասրենիներն ու այլ ծառատեսակներ հաջորդ գարնանը տեղափոխվելու են Կապանի այդ բարձունք»:

Կանաչապատման բաժնի պատասխանատուները հավաստիացնում են՝ չնայած ընտրվել են քիչ խնամք պահանջող ծառատեսակներ, բայց, միևնույն է, 5 տարի անընդմեջ տնկիները կլինեն նրանց ուշադրության կենտրոնում:

«ԶՊՄԿ» ՓԲԸ-ի տնկարանի և կանաչապատման աշխատանքի համակարգող **Միհրան Գևորգյանը** նշում է.

– Նախատեսել ենք նոր մեթոդներով ծառատունկ կատարել, յուրաքանչյուր բույսի հետ օգտագործելու ենք հիդրոգել, որը հնարավորություն կտա ջրի լրացուցիչ պաշար հավաքել բնական տեղումներից, հիդրոգելը վերցնում է խոնավությունը, ապա բաշխում արմատներին, նաև պարարտանյութեր է

պարունակում: Ծառատեսակները հատուկ են ընտրվել, որ շատ չտարբերվեն շրջապատի բույսերից:

Հանքարդյունաբերական ձեռնարկության բնապահպանության բաժնի պատասխանատուները վստահեցնում են՝ մի քանի տարի հետո կապանցիները զբոսանքի ևս մեկ գեղեցիկ վայր կունենան, որը կզարդարի քաղաքի համայնապատկերն ու կհիացնի զբոսաշրջիկներին:

Տիգրանուհի Բաղալյան

«Հանքարդյունաբերությունը զարգացնելու դեպքում Հայաստանը հարևանների համեմատ նույնիսկ մի քանի տասնյակ անգամ ավելի մեծ շահույթ կարող է ստանալ». ՀԱՅԿ ԱԿԱՐՄԱԶՅԱՆ

ՀԱՅԿ ԱԿԱՐՄԱԶՅԱՆ
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Լեռնամետալուրգիայի և քիմիական տեխնոլոգիաների ինստիտուտի Կայուն զարգացման և բնապահպանական ծրագրերի խորհրդատու, տ.գ.թ., դոցենտ

Հանքարդյունաբերությունը Հայաստանում զարգացող ոլորտներից է: Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Լեռնամետալուրգիայի և քիմիական տեխնոլոգիաների ինստիտուտի Կայուն զարգացման և բնապահպանական ծրագրերի խորհրդատու, տ.գ.թ., դոցենտ Հայկ Ակարմազյանը NEWS.am-ի հետ զրույցում ասում է՝ հանքարդյունաբերությունը զարգացնելու դեպքում Հայաստանը հարևանների համեմատ նույնիսկ մի քանի տասնյակ անգամ ավելի մեծ շահույթ կարող է ստանալ: **«Ընդունված է ասել, որ մեր հարևան երկրները հարուստ են նավթով, գազով: Բայց չի կարելի պնդել, որ բոլոր այդ երկրները բնական ռեսուրսներով Հայաստանից ավելի հարուստ են: Օրինակ՝ պղինձը, որով հարուստ է Հայաստանը, ի թիվս՝ լիթիումի, կոբալտի, նիկելի և հազվագյուտ տարրերի, հանդիսանում է կրիտիկական թռփ 5 մետաղներից մեկը, որոնցից կախված են ապագայի տեխնոլոգիաները՝ էլեկտրական մեքենաները, արևային վահանակները և կանաչ էներգիայի կուտակման ժամանակակից մարտկոցները»,** – նշում է մասնագետը: Իսկ արդյո՞ք Հայաստանում կրիտիկական համարվող մետաղների ուղղությամբ բավարար ուսումնասիրություններ իրականացվել են. այս հարցին պատասխանելու համար Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում փետրվարի 29-ին իրականացվել էր աշխատաժողով, որը նվիրված էր Լիթիումին: Աշխատաժողովի շրջանակներում Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի մասնագետները ներկայացրել էին իրենց դիտարկումները Լիթիումի վերաբերյալ ուսումնասիրությունների արդի վիճակի և կորզման հեռանկարների վերաբերյալ: Արդեն մարտի 11-15-ը Հայկ Ակարմազյանը Հայաստանում անցկացված աշխատաժողովի արդյունքները ներկայացրել է Մեծ Բրիտանիայում կայացած կրիտիկական մետաղներին և շրջանառու տնտեսությանը վերաբերող միջոցառման ժամանակ: Այցի շրջանակներում Ակարմազյանի կողմից ներկայացվել է նաև Հայաստանի հաջողություններն այս բնագավառում, պղնձի արդյունաբերության առաջատար հայկական խոշոր ընկերության՝

Ըստ Հայկ Ակարմազյանի՝ տպավորիչ են եղել Բրիտանական երկրաբանական ծառայություն, Քեմբորնի հանքարդյունաբերական դպրոց, ինչպես նաև Նյութերի մշակման ինստիտուտ այցելությունները...

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գործունեությունը, որտեղ արդյունահանվում և մշակվում է աշխարհի կանաչ, ցածրածխածնային և շրջանառու տնտեսության համար կենսական նշանակություն ունեցող պղինձն ու մոլիբդենը:
«Արտերկրի գործընկերները հանդիպումների ընթացքում մեծ հետաքրքրություն են ցուցաբերել Հայաստանի արդյունաբերական ոլորտի հանդեպ: Քննարկումների ընթացքում նշել են, որ մինչև 2030 թվականը կանաչ էներգիային անցմամբ պայմանավորված պղնձի սպառումը կքառապատկվի, իսկ աշխարհում էկոլոգիական սահմանափակումների հետ կապված խոստումները իրականացնելու համար 54%-ով ավելի պղինձ կպահանջվի», – ընդգծում է Հայկ Ակարմազյանը:
Նշենք, որ Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպանության աջակցությամբ և ՄԹ առևտրի և բիզնեսի դեպարտամենտի կողմից կազմակերպված այս միջոցառման ընթացքում իրականացվել են նաև այցելություններ ՄԹ առաջատար արտադրական ձեռնարկություններ, ինչպես նաև գիտահետազոտական կազմակերպություններ, որոնք կրիտիկական մետաղների հետ կապված տեխնոլոգիական լուծումների մշակմամբ են զբաղվում.
«Հնարավորություն է եղել ծանոթանալ գեոթերմալ էներգիայի և լիթիումի միաժամանակյա արտադրությանը, ինչպես նաև այցելել հազվագյուտ տարրերի, սպոդումեններից և հանքային ջրերից լիթիումի արտադրական ձեռնարկություններ»:
Ըստ Հայկ Ակարմազյանի՝ տպավորիչ են եղել Բրիտանական երկրաբանական ծառայություն, Քեմբորնի հանքարդյունաբերական դպրոց, ինչպես նաև Նյութերի մշակման ինստիտուտ այցելությունները, որի շրջանակներում հնարավոր է դարձել մասնագիտական փորձից և լաբորատոր սարքավորումներից օգտվելու հարցերում ձեռք բերել երկկողմ համագործակցության պայմանավորվածություն: Հարկ է նշել, որ ՄԹ ամբողջ այցելության ընթացքում ակնհայտ է եղել, թե որքան մեծ դերակատարություն ունի հանքարդյունաբերության ոլորտը Անգլիայի նման զարգացած երկրի համար, որը, չնայած չունի այնպիսի լուրջ անվտանգային խնդիրներ, ինչպես Հայաստանի դեպքում, բայց հետևողական աշխատանք է տանում կլիմայի փոփոխությամբ, գլոբալ տաքացմամբ պայմանավորված մետաղների պահանջարկի սպասվող աճի պայմաններում համաշխարհային տնտեսության մեջ իր տեղն ունենալու գործում, մշակում և աշխարհին կրիտիկական մետաղների պատասխանատու արդյունահանման նոր տեխնոլոգիական լուծումներ է առաջարկում:
Մասնագետի կարծիքով՝ եկել է Հայաստանում հանքարդյունաբերության նկատմամբ կարծրատիպային, բացասական ընկալումը դրականով փոխելու ժամանակը: Հանքարդյունաբերությունը զարգացնելու դեպքում Հայաստանը հարևանների համեմատ նույնիսկ մի քանի տասնյակ անգամ ավելի մեծ շահույթ կարող է ստանալ. **«Իհարկե այս գործում մեծ է նաև կրթության կարևորությունը. ծնողները առաջանցիկ քայլ պետք է անեն, և եթե իրենց երեխաները ընտրեն քիմիական տեխնոլոգիաների, հանքարդյունաբերության ոլորտի մասնագիտություններ, կդառնան բարձր վարձատրվող մասնագետներ այս ոլորտում, քանի որ հստակ է, որ ապագան մեծ պահանջարկ ունեցող, այդ թվում կրիտիկական նշանակության մետաղներն են, ինչպես նաև դրանց մաքուր արդյունահանման հետ կապված տեխնոլոգիաներն են»:**

Ավարտվել են «Լեռնագործ» մարզադաշտի վերանորոգման աշխատանքները



Կապանի «Լեռնագործ» մարզադաշտի վերանորոգման աշխատանքները սկսվել են 2023 թվականի դեկտեմբերին, ավարտվել՝ 2024-ի փետրվարին: Նախկին փայտե նստարանները փոխարինվել են պլաստիկե նստատեղերով: Մարզադաշտում արդեն կարող է տեղավորվել 2500 հանդիսական: Վերանորոգվել են և կահավորվել են հանդերձարանները: Լոգասենյակները հարմարեցվել են այնպես, որ միաժամանակ հնարավորինս շատ ֆուտբոլիստներ կարողանան լոգանք ընդունել: Վերանորոգումից հետո առանձին սենյակ ունեն նաև տեսուչն ու պատվիրակը: Առանձնասենյակներ են



Նորից հաղթական ռինգում...

«ԶՊՄԿ» ՓԲԸ ճանապարհային տեղամասում փետրվարի 5-ին աշխատակիցները մեծ ոգևորությամբ և հպարտությամբ սպասում էին իրենց աշխատակից Նարեկին, ով հունվարի 29-30-ը Իրանի Իսլամական Հանրապետությունում անցկացվող քիքբոքսինգի առաջնությունում գբաղեցրել էր առաջին հորիզոնականը:

Նարեկի մարզիչ Առնոլդ Կոստանյանը նշում է, որ իր սանը մեծ պատասխանատվությամբ է վերաբերվում սպորտաձևին, մարզումները ամենօրյա են՝ աշխատանքային օրվա ավարտից հետո, սակայն երբեք բաց չի թողնում պարապմունքները:

Չեմպիոնին ոգևորիչ և պարտավորեցնող խոսք է հղել նաև «ԶՊՄԿ» ՓԲԸ արտադրության գծով տնօրեն Եվգենի Կունակովը. *«Կոմբինատի ղեկավարությունը կողմնակից է, որ իր աշխատակիցները մշտապես մասնակցեն տարբեր միջոցառումների, որոնք անցկացվում են ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ արտերկրում:*

....Ձեր հաղթանակները պատիվ են բերում մեր ընկերությանը: Ի սրտե շնորհավորում եմ, ցանկանում, որ վարպետությունդ հետագայում էլ ավելի աճի»:

Նարեկ Առուսխանյանը պատրաստվում է առաջիկա մրցաշարերին, որոնք անցկացվելու են Հայաստանում. *«Ոչինչ անհնար չէ, եթե ունես մեծ ցանկություն»,* – նշում է Նարեկը:

Հաջողության դեպքում, նա հնարավորություն կունենա ներկայացնել Հայաստանը Եվրոպայում կայանալիք «Մարտ առանց կանոնների» սպորտաձևի առաջնությանը:

Թամարա Ավանեսյան
Քաջարան, 2024թ.

հատկացված երկու թիմի մարզիչներին: Տեղ է հատկացվել լվացքատան համար:

Աշխատանքներ են կատարվել նաև «Սյունիք» ՖԱ մարզահամալիրում՝ տեղադրվել են հանդերձարան-տնակներ, հանգստի համար նախատեսված տնակ: Մարզահամալիրում փոխվում է լուսավորությունը, գիշերային լուսավորության համակարգը հնարավորություն կտա մարզվել նաև երեկոյան ժամերին:

Տիգրանուհի Բաղալյան

450 տոննա բարձման հզորությամբ լիաքարշակ հանքային BelAZ-75710 բեռնատարը արտադրվում է Բելառուսի ավտոմոբիլային գործարանի կողմից: Աշխարհի ամենամեծ ինքնաթափն է: 503,5 տոննա քաշով բեռ տեղափոխելով ահմանել է Գինեսի ռեկորդ: Բեռնատարի արժեքը մոտավորապես 12 միլիոն դոլար է:

ԱՔԱՆԱՎՈՐԻՐ QR կոդը՝ ԻՄԱՑԻՐ ավելին:

Պատմական դաշնամուրի մոտ

– **Փաստորեն, մենք գտնվում ենք պատմական դաշնամուրի մոտ**, – հարցնում եմ Մեղրու տարածաշրջանի հոգևոր հովիվ Տեր Ռաֆայել քահանա Խանիկյանին:

– Այո, կարող եք այդպես ասել, մեղրեցիները միշտ հպարտությամբ նշում են՝ այն Հայաստանի առաջին դաշնամուրներից է, – պատասխանում է Տեր Ռաֆայելը, *– այստեղ է բերվել 1895-1896 թթ., ըստ տեղեկությունների որպես օժիտ նվեր է ստացել Մեղրի հարս եկած ագուլիսցի Եղիսաբեթը (Եղսիկը):* Մեղրեցի երիտասարդ Մկրտիչ Վաչյանն ամուսնանում է ագուլիսցի Եղիսաբեթի հետ, վերջինիս ծնողները որպես օժիտ գերմանական արտադրության «KNABE & THAL» մակնիշի դաշնամուրը գնում են

Մեղրեցի երիտասարդ Մկրտիչ Վաչյանն ամուսնանում է ագուլիսցի Եղիսաբեթի հետ, վերջինիս ծնողները որպես օժիտ գերմանական արտադրության «KNABE & THAL» մակնիշի դաշնամուրը գնում են Բեռլինից, գնացքով տեղափոխում այն Թիֆլիս, այնտեղից Ագուլիս, որտեղից էլ մեծ դժվարությամբ այն Մեղրի են բերում:

Բեռլինից, գնացքով տեղափոխում այն Թիֆլիս, այնտեղից Ագուլիս, որտեղից էլ մեծ դժվարությամբ այն Մեղրի են բերում: Արաքսի կիրճով միայն նեղ արահետ էր անցնում, որով բացառվում էր որևէ փոխադրամիջոցի օգտագործումը: Ուրիշ հնար չկար և երկու տասնյակ մեղրեցի երիտասարդներ կամային որոշում են կայացնում՝ դաշնամուրը տեղափոխել իրենց ուսերի վրա՝ հաղթահարելով մի քանի տասնյակ կիլոմետր դժվարամատչելի տարածություն:
Դժվար չէ պատկերացնել՝ ինչ աժիոտաժ է առաջացրել երաժշտական գործիքը մեղրեցիների մոտ:
Մեկ այլ վարկածի համաձայն՝ դաշնամուրը Թիֆլիսից գնել է Մկրտիչ Վաչյանը՝ կատարելով կնոջ՝ Եղիսաբեթի խնդրանքը: Ինչևէ, այժմ այդքան էլ կարևոր չէ վարկածներից որն է բացարձակ ճշմարտություն, մի բան հաստատ է՝ արվեստասեր ու գրագետ մարդկանց շնորհիվ տարածաշրջանը մշակութային իրարանցում ապրեց: Սակայն ամուսնական զույգը համատեղ շատ կարճ կյանք է ապրում, տակավին երիտասարդ, 1898 թ-ին մահանում է Վաչյանն ու որոշ ժամանակ անց կինը կրկին ամուսնանում և հաստատվում է Թիֆլիսում: Դաշնամուրը մնում է հարազատների մոտ, ովքեր էլ այն նվիրում են Մեղրու կուլտուրայի տանը, այնուհետև պահվում է գավառագիտական թանգարանում:
Եվ մինչև անգամ 1950-1960-ական թվականներին աշակերտները նվագում էին հանրահայտ այս գործիքի վրա:
Այն շքեղ տեսք է ունեցել. սև փայտից, փորագրված նախշազարդերով, յուրահատուկ ձևավորմամբ, երկու ոտնակով: Հիմա քիչ բան է հիշեցնում դաշնամուրի նախկին տեսքը, բայց... մի քանի նոտաներ դեռ հնչում են...
Դաշնամուրն այժմ գտնվում է Մեղրու Մեծ թաղի Սբ Աստվածածին (հիմնադրվ. 1673թ.) եկեղեցուն կից՝ կիրակնօրյա դպրոցում:
– Որպես նմուշ, թանգարանային իր պահպանելու համար՝ հարկավոր է գործիքի կյանքը երկարացնել, – ասում է Հայր Ռաֆայելը, – առաջ Աստված, հուսամ կկարողանանք ձեռնամուխ լինել:

Լիլիթ Իսրայելյան
Քաջարան 2024 թ.

«Պղնձի Համար», 1960թ.

ԿԱՆԱՅՔ՝ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Շքանշանակիր բանվորուհին...



Համբավաշատ լեռնագործ, հարստացուցիչ ֆաբրիկայի ֆլոտատոր, Լենինի շքանշանակիր Պայծառիկ Աբրահամյան:

...Կոմբինատի հարստացուցիչ ֆաբրիկայի չորացման տեղամասում է աշխատում սևահեր, կարճահասակ, ճարպիկ ու արագաշարժ, միջին տարիքի մի կին՝ Պայծառիկ Աբրահամյանը, ով աշխատանքային բարձր ցուցանիշների հասնելու համար այս տարվա (1960) մարտի 7-ին ՍՍՌՄ Գերագույն Սովետի նախագահության հրամանագրով պարգևատրվել է Լենինի շքանշանով: Սովետական կառավարության կողմից բարձր գնահատված նրա աշխատանքը ոչ միայն իրեն ոգեշնչեց արտադրական փայլուն հաջողությունների հասնելու գործում, այլև ոգեշնչեց նրա ղեկավարած բրիգադային, ֆաբրիկայի ամբողջ կոլեկտիվին:
Նրա ղեկավարած չորացնողների բրիգադը տարվա սկզբից բարձր պարտավորություն էր ստանձնել: Նրանք խոստացել էին տարեկան առաջադրանքները կատարել Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակին:
Անցած ինը ամսում Աբրահամյանի բրիգադը տասնմեկ ամսվա առաջադրանք է կատարել, իսկ սեպտեմբեր ամսվա պլանը գերակատարել է 35 տոկոսով:
Չբավարարվելով ձեռք բերած հաջողություններով, Աբրահամյանի բրիգադը հոկտեմբերի առաջին տասնօրյակում կատարել է կես ամսվա առաջադրանքը, ավելի որակով չորացնելով մոլիբդենի կոնցենտրատը:
Չորացման բաժնի աշխատանքները ֆաբրիկայի մյուս բաժինների աշխատանքի համեմատ, ավելի պատասխանատու է և դժվար: Այդ աշխատանքներում իրենց վարպետորեն են դրսևորում բրիգադիրից բացի նաև մյուս կանայք, նրանք բոլորն էլ աշխատասեր, անձնվեր մարդիկ են, նվիրված իրենց գործին: Նրանցից շատերը ընտանիքի մայրեր են, հոգատար տնտեսուհիներ, որոնք ձգտում են ավելի շատ աշխատել, Հայրենիքին ավելի շատ ու որակյալ կոնցենտրատ տալ:
Աշխատանքում իսկական հերոսուհի լինելուց բացի Աբրահամյանը օրինակելի մայր է, տնտեսության ղեկավար: 1944 թվականին զրկվելով ամուսնուց և իր վրա վերցնելով ընտանիքի հոգսը, երբեք չի ընկճվել և հաղթահարել է բոլոր դժվարությունները, իր չորս երեխաներին խնամել, ուսման ուղարկել: Այժմ նրա երկու զավակները սովորում են, երկուսը՝ աշխատում կոմբինատում, աշխատում են և ձգտում միշտ նմանվել իրենց շքանշանակիր մորը:
Տասնչորս տարվա կոմունիստ Պայծառիկ Աբրահամյանը, Քաջարանի կոմբինատի ֆլոտացիոն ֆաբրիկայի անվանի բանվորուհին, մեկն է սովետական միլիոնավոր այն կանանցից, ովքեր ազատագրված անցյալի դարավոր կապանքներից, տղամարդու հետ համահավասար ակտիվորեն մասնակցում են կոմունիզմի շինարարության մեծ գործին, քայլում յոթնամյակի հոյակապ առաջադրանքներն իրականացնողների հերոսական շարքերում:

Ս. Հարությունյան
«Պղնձի Համար», 1960թ.

ՄԱՀԱՑՈՒ ՎՏԱՆԳԻ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆԸ

5 մահացու անկումից **1**-ը տեղի է ունենում **3** մետրից պակաս բարձրությունից

Անկման բարձրություն	Մահացության ցուցանիշ
ավելի քան 9 մետր՝	20.6 %
8-9 մետր՝	9.3 %
6.5-7.5 մետր՝	13.8 %
5-6 մետր՝	15.4 %
3.5-4.5 մետր՝	21.1 %
2-3 մետր՝	12 %
0.3-1.5 մետր՝	4.1 %
0 մակարդակ՝	3.7 %

Բարձրության վրա աշխատելիս՝

ԱՄՐԱԿԱՊՎԻ՛Ր